դարձան յետս, և զկնի նոցա եկեալ միաբանաց պատմեցին 'ի Պատրիարքարանն զբանակռիւն իւրեանց ընդ Յոյնս, և Թէոդորոս Պատրիարք ժողովեաց զգլխաւոր միաբանս և զոմանս յուխտաւորաց, և Դիոնէսիոս ծանոյց նոցա ըզհանգամանս գործոյն, եւ յորդորեաց ուղղել զմիտս համարակաց․ նոյնպէս և 'ի վաղիւն յատենի եկեղեցւոյ, թէ պարտ է օրհնել զԱրքայ և զբարերարս ազգին, չտալ տեղի խռովութեան, և սիրով վարիլ ընդ Յոյնս՝ այլովքն հանդերձ։ Լուեալ Յունաց զայսպիսի տարադէպ գործս Հայոց, 'ի նմին աւուր մնացին ոմանք յուխտաւորաց նոցին յԱստուածածին զկնի պատարագին․ զի եթէ Հայք ձեռնարկեսցեն լուցանել զչարանն զայն՝ խորտակեսցեն և յարուսցեն խըռովութիւն։ Իսկ ոմանք յուխտաւորաց Հայոց դարանեալ 'ի ճանապարհի՝ սպասէին Դիոնէսիոսի վտանգել զնա, եւ կամ վնասել յեկեղեցւոջ անդ․ իբրեւ ոչ հասին խորհրդոց իւրեանց՝ ժողովեցան 'ի գաւիթ եկեղեցւոյն Ս․ Յակոբայ 'ի սադրելոյ անզգաստից ոմանց, և յարուցին աղմուկ մեծ, և աղաղակէին խառնաձայն՝ Դիոնէսիոս կործանեաց զազգն, ըստ հաճոյից իւրոց բառնալ կամի զչարանն, գերի արար զմեզ Յունաց, և այսպէս անլսելի հայհոյութեամբ դիմել կամէին 'ի Պատրիարքարան․ հասեալ Փոխանորդին եւ Թարգմանին հազիւ կարացին ցրուել զխուժանն։ Եւ զկնի անցանելոյ սուղ ինչ միջոցի՝ յանկարծ վերստին կուտեցան անդ բազմութեամբ, և սկսան նախատական բանիւք աղաղակել և խնդրել տալ զԴիոնէսիոս 'ի ձեռս նոցա․ զի իբրև անհաւատարիմ ազգին յօշել զնա անդամ անդամ, զի առեալ զկաչառս 'ի Յունաց կորոյս զիրաւունս ազգին ասէին, և այսպէս այր զարամբ ելանելով խուժէին և գոչէին, որոց պարագլուխ էր Իւսկիւտարցի [illegible] կոչեցեալ քահանայի սարկաւագ որդին, և միաբանք երկընչէին գուցէ լուեալ այլազգեաց, բացցեն դուռն մեծի տուգանաց․ վասն որոյ աղաչանօք լռեցուցեալ ցրուեցին զնոսա 'ի տեղիս իւրեանց։ Եւ վաղ քաջ ընդ առաւօտն ժողովեալ նոցա 'ի մի վայր՝ խորհեցան չթողուլ զգործն․ ոմանք գնացին յԱստուածածին յուզել խռովութիւն անդ, եւ իբրեւ ոչ կարացին, դիմեցին 'ի վանքն, եւ կամէին խուժել 'ի Պատրիարքարանն, և չհանդուրժեալ Թէոդորոսի